

Ա Մ Ս Ա Գ Ի Ր


ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ,
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ



ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1877


ՅՈՒԼԻՍ



ՄԶԿԻԹ ՕՄԱՐԱՅ (ՀԻՆ Տ. ՍՈՂՈՍՏՈՆԻ)

ՅԵՐՈՒՍԱԴԵՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ



ԲՏԱՍԱՆԵՐՈՒՄԻ ՏԱՐԻ

թիւ 7.

ԱՄՍԱԳԻՐ

ՅՈՒԼԻՍ 31

1877.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԿԱՐԵԽՈՐՈՒԹԻՒՆ ՈՒՍՄԱՆ

Ա. ԳՐՈՑ (*)

Գ.

ՀԻՆ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԵՒ ԱՐԴԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ
ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԵՆԷՆ

Լա է կոյր աշօք : քան կոյր մտօք :

Ա. ԳՐՈՑ ուսման կարեւորութիւնը ղդալն կերպիւ յայտնի կը լինի նաեւ այն ժամանակ երբ մարդ կ'ընթերցաւ սիրէ ուշադիր մտառութեամբ հին Հեթանոսական և արդի Քրիստոնէական աշխարհներու՝ այն է ազգաց և ժողովրդաց պատմական կեանքը, կը քննէ

և կը բաղդատէ միմեանց հետ նոցա ներքին բարոյական կենաց վիճակն ու որպիսութիւնները, նոցա կրօնի և գաղափարաց տեսակէտերը կամ հիմունքները, նոցա հոգւոյ և մտաց մշակութեան եղանակները, նոցա բարոյական յառաջադիմութեան և զարգացման սահմանները և վերջապէս նոցա կենաց և գործոց հետեւանքը :

(*) Շարունակութիւն, տես թիւ 6 :

Այս քննութեան կամ բաղդատութեան զգալի տարբերութիւնն արդէն յայտնի կը տեսնուի նոյն իսկ նախ քան զգալուստն Քրիստոսի եւ նախ քան զյայտնութիւն նորա Աստուածային վսեմական վարդապետութեանց եւ Քրիստոնէական աշխարհաշէն բարոյական օրինաց, այն է Հրէայ եւ Հեթանոս ազգաց պատմական կենաց մէջ։ Եբրայեցւոց ազգն որ իւր ճշմարիտ աստուածածանօթութեամբ հեթանոս ազգաց այն անհամար բազմութեան մէջէն զատուած եւ որոշուած՝ Քրիստոնէութեան ստուերական օրինաց միջոցաւ կը կառավարուէր, իւր կրօնի, պաշտաման, ծիսակատարութեան, թէ՛ անհատական եւ թէ՛ ընդհանրական պարտաւորութեանց, իւր բոլոր գործառնութեանց եւ կենցաղավարութեան համար աստուածագիր օրէնքներ եւ կանոններ ունէր։ Երբ զբաւուրութեամբ նոյն օրինաց եւ կանոնաց համեմատ կեանք կը վարէր, շատ բարելաւ, քաղաքակիրթ եւ յառաջագէտ վիճակ մը ունէր հեթանոս ազգաց վիճակէն աւելի բարձր եւ վայելուչ մարդկային արժանապատուութեան։ Եբրայեցւոց ազգն իւր բոլոր կենաց մէջ ցոյց տուած թէ՛ անհատական, թէ՛ ընկերական, թէ՛ ազգային եւ թէ՛ կրօնական սուաքինութիւնները, մեծութիւնները եւ մարդավայել ամեն արարքները կը պարտի իւր օրինագրքին, զոր Ստուածոյ ընդունած էր, յորմէ զուրկ լինելով հեթանոս ազգերն միայն բնական օրինօք եւ իրենց խելքի հնարած միջոցներով եւ կրօնքով կառավարուելով տգիտութեան մի այնպիսի խորին խաւարի մէջ կը թարթափէին, որ օր քան զօր դէպ յանկարգութիւն, յանբարոյականութիւն եւ յապախանութիւն կ'առաջնորդէր դուռս։ այնպէս որ երբ Հրէաստանի սահմանափակ շրջանակէն

գուրս ձգէ մարդ իւր տեսութիւնը, սոսկմամբ եւ արհաւրանօք կը լեցուի իրեն ներկայացած անպատմելի այլանդակութեանց, պժգալի անբարոյակաւ նութեանց եւ սոսկալի անգթութեանց երեսէն, որք անխտիր եւ առանց խղճի կը կատարուէին գրեթէ բոլոր հեթանոս ազգաց մէջ ի նորհա իրենց այլանդակ կրօնի եւ անհեթեթ աստուածոց։

Ի՞նչ է նոցա կրօնն եւ ո՞ր անոնց հեղինակներն, նոցա կրօնն է երեւակայութեանց այլանդակ ծնունդներ։ իսկ հեղինակներն են աւելի ճարպիկ եւ խորամանկ մարդիկներ, որք քաջ վերահասու լինելով՝ ժողովրդոց կրօնական զգացմանց ուրբան անձնատուր լինելը՝ այսպիսի ճարտար միջոցներով կը յաջողին ազգեր եւ ժողովուրդներ իրենց նպատակին ծառայեցնել։ գալով նոցա պաշտած անհեթեթ եւ այլանդակ աստուածոց, զարմանօք կը տեսնեմք թէ ի՞նչ են, կամ անզգայ դրօշաւներ եւ արձաններ, կամ անբան եւ զաղի անասուններ, ինչպէս Եգիպտացւոց եւ Հնդկացն, եւ կամ երկնային մարմիններ եւ երկրի տարերք, ինչպէս Պարսիցն։

Իսկ արդ՝ երբ բանական մարդն խորին տգիտութեամբ այնքան կը ցընորի, որ անզգայ տարերք եւ անբան անասնոց իբրեւ աստուածոց պաշտօն կը մատուցանէ, իւր ձեռագործին կամ իւր ծառայութեան համար սահմանեալ անբան արարածոց առջեւ կուրօրէն ծունր դնելով պաղատագին անոնցմէ օգնութիւն, ձեռնտուութիւն եւ յաջողութիւն կը խնդրէ։ այն տեսակ մարդերէն ի՞նչ բարիք կամ ի՞նչ առաքինութիւն կարելի է սպասել։ Եթէ ներելի է յիմարէն հանձար եւ իմաստութիւն ակնկալել, ներելի է նոյնպէս ապշութեան եւ անբանութեան հասած մարդէն բանա-

ւոր և օգտակար դործ ակնկալել. հետեւաբար այստեղ անբանական վիճակի բնական հետեւութիւնն է այն ինչ որ էր հեթանոսական կեանքն, ընդհանուր անբարոյականութիւն, ապականութիւն և ցոփութիւն, որոյ մէջ մինչ ՚ի սլարանոց ընկղմած էին գրեթէ բոլոր հեթանոս աղգերն իրենց ապականեալ և պղծագործ աստուածոց նմանելու ջերմեռանդ կրօնասիրութեամբ. որովհետեւ կը տեսնեմք հեթանոսական մատենագրութեանց մէջ, որ հեթանոսական բազմաթիւ աստուածոց այն ամբարիշտ անբարոյական պատմութիւնները, ապօրինի սէրն, զաղիր՝ պղծութիւններն, անգութ խժոժութիւններն, նախանձու և ատելութեամբ վառետու իրարու դէմ յարուցած հակառակութիւններն և մղած պայքարներն ժամանակի վիսպատանաց և բանաստեղծից միջոցաւ մեծ տեղ բռնած են ժամանակի մատենագրութեան մէջ, որք իբրեւ կրօնական երգեր շատ հանգիսից և տօնակատարութեանց մէջ ևս կ'երգուէին ՚ի լուր ժողովրդեան, որ անշուշտ լլսելով իւր աստուածոց շամբշութիւնները և կատաղի պատերազմները մի և նոյն զգացումներով ինքն եւս կը գրգռուէր նոցա նմանող լինելու մեծ եռանդով և միթէ բուն իսկ այն չէ՞ պատճառն որ հեթանոսութեան կրօնական տօնախմբութեանց և հանգիսից օրերն աւելի նշանաւոր և համբաւեալ եղած են ամենատեսակ ապականութեանց մասին, որոյ մէջ ամենէն աւելի նշանաւորն է Սպանդարտաբանի տօնը, որ քաղաքակիրթ և յառաջագէժ Հռովմայեցիներէն եւս համակրութեամբ ընդունուելով կը կատարուէր մեծ պատրաստութիւններով եւ գիշեր ատեն՝ որոյ ուրախութեանց մասնակից էին անխափր թէ՛

արական և թէ՛ իգական սեռերն ամենայն համարձակութեամբ, որոյ մէջ թերեւս մի քիչ պատկառոտներն՝ գիշերային մթութեան շնորհիւ առաւել համարձակութիւն կըստանային. այս ապականալի տօնի զաղըալի ապականութիւններն, քստմնելի ոճրագործութիւններն և անլուր անկարգութիւններն հետզհետէ այնքան կը բազմանան և այնքան կը յառաջագիմեն, որ ետքէն սպանդարտաբանի տօնը մահաբոյժ խորհրդոյ պատուանունը կ'ըստանայ եւ Հռովմայի մեծ ծերակոյտն մեծ դժուարութեամբ հազիւ կարող կը լինի խափանել զայն:

Ահաւասիկ այս էր հեթանոս աշխարհի բարոյականի վիճակը, այս էր նորա մարդկահնար կրօնի արդիւնքը, ասոնք էին նոցա պաշտած ողորմելի աստուածները և այս ապականութեան հեղեղն նոյն աստուածոց առատ բարիքներն են, որք ողորդելի բոլոր աշխարհ, յորոց գարշելով նոյն իսկ հեթանոսներն յուսահատ իրենց վիճակէն կըսկսին աղաղակել, «մինչեւ երկինքէն մարդ մը չ'իջնէ՝ անհնար է մարդոց փրկութիւնը». եւ արդարեւ այնպէս եղաւ, մարդկային ոչ մի հեղինակութիւն՝ չունեցաւ այն ջորութիւնն որ կարողանայ մարդկային ամենի կրից սանձ դնել և նորա ըմբոստ բնաւորութիւնը զսպել և զոր մարդն ինքնին զգալով, իւր աչքերն յերկինս դարձուցած միմիայն անտի օգնութիւն և փրկութիւն կ'ըսպասէր. սոցա հետ միասին Հրէական ազգն անգամ որ թէպէտ ունէր իրեն ուղղեցոյց մի Աստուածային օրինագիրը և այնու վերահասու լինելով ճշմարիտ Աստուծոյ ամենաբարի կամաց և յայտնութեանց կարող էր հեթանոսներէն աւելի բարձր և արժանաւորել կեանք մը վարել աշխարհի վրայ և օրինական

պարտքերը կատարելով հանդերձելոյն մէջ յուսալ վրկութեան, սակայն սա եւս իւր կրած բազմադիմի նեղութեանց, տառապանաց և գերութեան պատճառաւ, թէ՛ դրացի և թէ՛ տիրապետող հեթանոս ազգերէն շատ մը հեթանոսական սովորութեանց և մութութեանց վարժած լինելով՝ շեղած էր ուղղութեան ճանապարհէն, մանաւանդ գոյացած էին իւր մէջ հերձուածներ եւս ինչպէս էին Սադուկեցիք, որք ուրանալով հոգւոյ անմահութիւնը, հանդերձեալ կեանքը եւ յաւիտենական վարձքն ու պատիժը անտարբեր էին օրինաց հետեւողութեան և սլատուիրանապահութեան, մաս մը եւս որք Նոր Ատակարանի մէջ ընդհանրապէս դառն Դպրաց և Փարիսեցւոց կ'անուանին, թէեւ շատ նախանձաւոր և հաւատարիմ էին արտաքին պաշտամանց և ծիսական բազմակողմանի արարողութեանց ճշդիւ գործադրութեան, սակայն այս միայն արտաքին ցոյց մը լինելով ներքին կերպիւ հեռացած և օտար էին Աստուածային օրինաց բուն հոգիէն և նորա բոլորովին հակառակ կեանք մը կը փութէին. իսկ ստորին կարգի ռամիկ ժողովուրդն եւս իւր առաջնորդաց եւ օրէնուսոց վարդապետաց իրենց վարդապետութեանց դէմ ընդդէմ հակառակ կեանքը տեսնելով շուարած և գայթակղած ինչ ընելիքը չէր գիտէր, վերջապէս թէ՛ Հեթանոս և թէ՛ Հրէայ յայտնապէս զգալով իրենց վիճակի նուաստութիւնը ընդ նմին ըզգալով եւ իրենց օրինաց զիրենք այն նուաստութենէն բարձրացնելու անկարողութիւնը, նա մանաւանդ Մեսիայի գալտեան համար Մարգարէից նշանակած ժամանակի մերձենալն եւս տեսնելով, ամենքն առհասարակ ակրնդէտ նմա կըսպասէին և նորա ձեռամբ

իրենց կենաց մի ամենանոր հեղափոխութեան կ'ակնկալէին, որպէս զի ըստ թափին, որպէս զի ուշաբերին, որպէս զի լուսաւորուին և յլերջապէս, որպէս զի կարողանան իբրեւ մարդ՝ մարդկային արժանապատուութեան համեմատ ապրիլ եւ իրենց բուն նպատակակետին ծառայել, որուն չը կարողացաւ մարդ կատարելապէս հասնիլ. նախ քան զքրիստոնէութիւն և միայն քրիստոնէական այն Աստուածային ամենաբարձր կրօնքն եղաւ այս մասին դաստիարակ և ուղղիչ մարդոյն դէպ ի իւր վտեմ կոչումն և Աստուածային նպատակը. Բազում դարերէ ի վեր ի Հրէից եւ Հեթանոսաց ակնկալեալ այն Աստուածամարդն իջաւ յերկնից ի խոնարհ. իւր Աստուածային վարդապետութիւններով լուսաւորեց մարդկային խաւարապատ հոգիները՝ զարթոյց նոցա թմրեալ սրտերը, ուսոյց անոնց՝ առ Աստուած, առ անձն և առ ընկերս ունեցած պարտաւորութիւնները, դրաւ երկրի վրայ քրիստոնէական կրօնի այն հաստատուն անկիւնաքարը, որուն ընդհարուելով փշուրեցան ամեն մարդկահնար կրօններն, սովրեցուց մարդոց աշխարհի վրայ բարւոք ապրելու և երկնից մէջ անմահանալու եղանակը, մատնանիչ ցոյց տուաւ նոցա արքայութեան դուռը և երկնից ճանապարհը, բացաւ նոցա առջեւ անարգել տմեն յառաջագիմութեան բարօրութեան և երջանկութեան ճանապարհը, ընդհանուր մարդկութիւնը ի մի յօդեց սիրոյ և եղբայրութեան ամրապինդ կապերով. այս ամենը՝ երկրի վրայ ինքն անձամբ առնելէն զինի, երբ անդրէն յերկինս վերացաւ, աւանդեց մարդոյն իւր նուիրական կտաղիքը՝ Ս. Աւետարանը, որով 1877 տարիէ ի վեր կառավարուելով Քրիստոնեայ ազգերն

կը զարդանան, կը զօրանան, կը կատարեալագործունին և կը յառաջագիմեն, սիրոյ և եղբայրութեան մէջ, առաքինութեան և մարդասիրութեան մէջ, կրթութեան և դաստիարակութեան մէջ, միով բանիւ ամեն օգտակար բանի մէջ. հետեւաբար կը սլարուաւորինք համարձակ խոստովանիլ, որ ներկայ դարուն այն ամեն շնորհքները, այն ամեն յառաջագիմութիւնները, այն ամեն դիւրութիւնները և բարիքները, զորս այսօր ընդհանուր մարդ-

կութիւնը կը վայելէ, կը պարտինք Քրիստոնէութեան եւ Աստուածային Ս. Գրոց, որ նոյն Աստուածային կրօնի օրինագիրքն կամ լաւ եւս է ասել դասագիրքն է. ապա ուրեմն սոյն բազմաթիւ քննութենէն ևս ակնյայտնի կը տեսնուի թէ Ս. Գրոց ընթերցանութիւնը կամ լաւ եւս է ասել ուսումն՝ սրբան կարեւոր է մարդոյն ամեն բանի համար եւս:

(Շարունակելի:)

Խ Ա Չ Ե Լ Ո Ի Թ Ի Ի Ն

Ո՛վ, զոր 'ի նուէր ինձ ետուն շրթունքն անզօր ոգեսպառ,
Յողջոյն յետին հրաժեշտին, հուսկ 'ի շնչոյն տուր և առ,
Խորխորհնէրդ սուրբ նըշան, պարգեւ ձեռին դաշխահար,
Ո՛վ Արարչիս վեհ նըկար:

Քանի՛ լալիք զանձկացրեաց թացին ըղբոյդ պատուանդան,
Յօրմէհետէ 'ի ձեռս իմ անկար աստէն դողդոջուն,
Թողեալ զուրուք վըկայի ըզծողըն ջերմ յեռանդան,
Տամսէկ գեռ հուսկ 'ի շնչոյն:

Տըմոյն լապտերք փայլէին յետին յաղօտ ինչ նըշոյլ.
Երէցն անդէն մըմընջէր զանոյշ եղերք ըզմահուն,
Հանգոյն երգոց ողբագին՝ զոր մնչիցէ քաղցրասոյլ
Մայր առ մանկիկն իւր 'ի քուն:

Ճակատն յուսոյն իւր պարկեշտ ունէր ըզ հետս անդ անջինջ.
Եւ 'ի դէմս իւր մահագոյն՝ յօգոստափառ հարեալ գեղ,
Վիշտն անցաւոր փախըստեայ՝ դրօշմէր ըզնորհըս իւր ջինջ,
Եւ մահ՝ ըզփառսըն չըքեղ:

Հողմ ո գգուէր հեղաբար ըզհերս գլխոյն հոլանի՝
Մերթ բացխրիկի մերկանայր և մերթ քողէր ըզդէմս իւր.
Զերդ 'ի շիրիմ մարմարեայ ճօճեալ ճեմին յերերի
Ըստուերք նոճեաց թըխաթոյր:

Մին 'ի ծղեացն ըզմահճէն մեռելոտի կայր առ կախ .
 Ըզմիւսն ինքնին լանջս 'ի կոյս թեթեւակի անդ ծալէր ,
 Գոգ 'ի խնդրել անգագար և հուպ ամել յիւրն երախ
 Ըզիրկողին իւր պատկեր :

Շրթունքն 'ի նա անձկայրեաց՝ դեռ ժպտէին անդ 'ի կէս ,
 Այլ համբուրին ընդ շրթինդ ոգեակն ելիք զիւր մարմին .
 Զերդ ըզննգրուկ ամբրոսեան՝ զոր լափիլիզէ բոց հրակէզ
 Զեւ հրդեհեալ զայն բնաւին :

Արդ ողջ 'ի նինջ մահազդեաց նիրհէր շրթանցն 'ի կապոյտ .
 Հեւքն 'ի կրծոյն ծանրաբուն՝ ոչ եւս հծծէր սլաց առ սլաց .
 Ու ախանողիքն հեղաբար զաջքն անդէն շիջանուտ
 Անկանէին դեռաբաց :

Այլ իմ ոսկերքս ըզդողի քսմնասարսուռ հարեալ յահ՝
 Եւ չիլսէի՛ մատչել հուպ առ այդ նշխար՝ սիրազեղ .
 Իբր անշըշունչ մեծաշուք վայելութեամբ իւրով մահ
 Սրբէր ըզնէ կուսագեղ :

Զիլսէի՛, ո՛հ . . . այլ երէցն ետես զիմ համր ըղձութիւն .
 Ու ոյծ իւր մատամբք ըզնըւն խաչին առեալ 'ի ձեռին՝
 “Նա՛ ինքն ահա յիշատակ , նա՛ ինքն և յոյս զըւարթուն ,
 Տար՛ զայնս ընդ.բեզ որդեակ իմ” :

Այո՛ , կալաց ըզբեզ պինդ ո՛ մահաձիրդ պարգեւ .
 Յայնմ օրէ և առ յապայ եօթիր փոխեաց ըզտերեւ
 Զոր յանանուն 'ի շիրմին տնկեցի ծառ երկնաբերձ ,
 Եւ դու ցանգ յիս կացեր մերձ :

Պահպան անբուն եղեալ յար մեծամոռաց հէգ սրտիս ,
 Ընդ հինգն ամաց բարդ 'ի բարդ՝ 'ի յուշ ետուր միշտ յորդոր .
 Եւ իմ աչկունք ցողաթուրմ շիթ շիթ հեղին անդ լալիս
 Խաչին նամէտն 'ի խրխոր :

Ո՛վ երկնասլաց վեհ հոգւոյն հաւատարիմ դու ընկեր ,
 Եկ և հանգիր 'ի սիրտ իմ , աստ՛ տունը ինձ յայտնութիւն ,
 Զինչ նէ հծծէր .բեզ մեղմիկ՝ երբ չունչ ձայնին իւր կերկեր
 Քոյդ մըմնջէր լոկ զանուն :

Նսեմաստուեր 'ի ժամուն՝ յոր հոգին յինքն ամփոփեալ ,
 Ի բալս աղջից անթափանց՝ քողածածուկ 'ի համբուն ,

Ի յուրտ զգացմանցս անգր 'ի տար խուսեալ փախչի քայլ առ քայլ
Խոնարհ 'ի յետին մեր ողջոյն .

Յորժամ ոգիք մեր առ կախ ընդ մէջ կենաց և մահուան ,
Իբր ըզպըտուղ ինչ բեռամբն յաղուբայնւոյն բացախիլ ,
Առ մէն շնչոյս տուր և առ ճոճեալ ճեմիմք 'ի տատան
Յայգոյ շերմին 'ի տեսիլ .

Մինչ նըւագաց և ջայլոց խառնաշրփոթ շօինդ և բամբ
Ո՛չ եւս զուշ մեր ըսթափէ զնիրհեան 'ի քուն մահաստուեր .
Ոգեւարին 'ի շրթունս մածեալ 'ի դառնրն տադնապ ,
Զերդ մըտերիմ անձնըէր ,

Առ լուսասփիռ փողփողել յանձուկ շաւղին անդ 'ի ստուեր ,
Եւ համբառնալ առ Աստուած զաչացն աղօտ հայեցուած ,
Ո՛վ միխթարդ երկնառաք՝ զո՞ր ձայնս արդեօք մնէցեր
Յունկըն նորին , ճն խօսեաց :

Զի դու գիտես մեռանիլ , և աստուածեան արտասուք
Ի գիշերին յոր 'ի զուր կացեր առ հայր քո յաղօթ ,
Շիթ շիթ թացին անդ զարմատըս ձիթենւոյն սրբաշուք
Յերեկորեայ յառաւօտ :

Վերուստ խաչին ուր աչկունքդ կշռեցին զայդ մեծ խորհուրդ ,
Տեսեր ըզմայրդ յարտասուս և զէս 'ի սուգ և յաւաղ .
Ըշիրեքիսդ իբր ըզմեղ թողեր յերկրի որբ պանդուխտ ,
Եւ ըզմարմինդ 'ի դագաղ :

Երդուեալ յայդ մահ աստուածեան՝ մաղթեմ լիցի և հիքոյս
Ողբամնչիկ զայդ հառաչ 'ի ծոց սիրոյդ արձակել .
Մինչ իմ յետին հնչէ ժամ՝ թող քոյդ և քեզ լիցի յուշ ,
Ո՛վ որ գիտեսդ մեռանել ,

Ելլոց հետոցն 'ի խնդիր՝ յոր շունչն յետին հեղասահ
Արձակեաց առ ոտըս քո զանդառնալին իւր հրաժեշտ .
Եւ իւր ոգեալին ընդ առաջ գայցէ հոգւոյս հորդել ոահ
Յարդանդ Վահին լուսահեշտ :

Իցիւ յայնժամ տեսիլ ինչ ծանրութախիծ և խաղաղ ,
Մեռելահան իմ մահճին կացեալ սրգով աւրնթեր՝
Իբրեւ հրեշտակ լալագին քաղէր յանշունչն իմ երախ
Զաւանդըն զայն սրբանուէր :

Քաղցրացո՛ղ զժամս իւր յետին , ըզիրթօտ քայլս իւր անդեւն .
Եւ զերդ գրաւ ինչ նուիրեալ 'ի յոյս ու 'ի սէր գեղաւէտ ,
Թո՛ղ անցցէ կարգ ըստ կարգէ յանցաւորէն փախըստեայ՝
Առ որ կացցէ զնրն ըզյետ :

Մինչեւ յօրն այն ուր թափանց ընդ մաւթ կամարս մեռելոյ՝
Եթնահնչակ բարբառ մի զնա հրաւիրեալ ընդ երկին ,
Համանգամայն զարթուցէ զնիրհողան 'ի ստուեր փրկագործ
Յաւերժական սուրբ խաչին :

ԼԱՄԱԹԻՆ

Ա.-Է. Կարապետեան :

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵԱՆՔ

(Շարունակութիւն : տես թիւ 6 :)

Բ. Արբուշ :

Արբուշքը՝ մարդոյ կենաց երկրորդ շրջանն , Պատանեկութեան ընթացաւորէն է և երիտասարդութեամբ կը վերջանայ : Այս հասակը կըսկսի երկրորդ ակուայ հանելէն : Մինչեւ այս ատեն գոգցես բնութեան ճիգն էր իւր աւանդը պահպանել ու աճեցնել , մի միայն Սննդեան և աճեցման հարկաւոր ծառայութիւններ կը մատուցանէր նա դեռահաս մարդոյն , որ կ'ապրէր անգործ եւ բոլորովին տարբեր կեանքով մը . միշտ տկար , ինքն իւր մէջ ամիտփեալ , առանց իւր նմանաց հետ հաղորդակցելու կարողութեան , բայց ահա՛ վաղ ընդ փոյթ կենաց պայմանները կը բաղմատարտին , մարմինը հետզհետէ աճելով և կատարելագործուելով՝ նորանոր զօրութեամբ և կարողութեամբ կը զարգանայ : Բնութեան Գարունն է սա , եղանակ հաճոյից և զուարճութեան , յորում

բուռն կրքեր և զանոնք զսպելու համար մարդկային արուեստիւ բնութեան դէմ հնարուած միջոցներ իրարու դէմ կը մարտնչին :

Պատանեկութեան նշանները կ'ըսկըսին երեւիլ մանչերունը՝ հասարակօրէն 14-16 , իսկ աղջիկներունը՝ 12-14 տարեկան հասակին մէջ , թէեւ այս ժամանակամիջոցն կը տարբերի կենաց զանազան պարագաներուն՝ Սննդեան , Կլիմային և եղանակի տարբեր աստիճաններուն համեմատութեամբ : Սուրբաբար սննդարար և առատ կերակուր ունեցող , տաք կլիմայի մէջ ապրող մանկունք աւելի կանուխ կը ստանան աճումն , քան հակառակջպարագայի մէջ գտնուողներն : Մանչերն աղջիկներէ աւելի երկար ժամանակի պէտք ունին այս հասակին հասնելու համար . վասն զի իրենց մարմինը աւելի հոծ , ջրերը պինդ , ոսկորներն հաստակաղմ և հասակը մեծադիր ըլլալով առ նուազն 2-3 տարի աւելի կ'ուղէ աճումն ստանալու համար :

մինչդեռ աղջիկներ աւելի փափուկ և փոքր-աղիւր կ'աղմուծիւն : կ'աւնենան ընդհանրապէս :

Այս նշաններն են մանչերուն համար դայիկը եւ յօդակայնէրուն վրայ ընդարմացումն , ազուամողերու երեւիլն և ձայնի փոփոխութիւնն ու զօրաւոր ուժգնութիւնը . իսկ աղջիկներու համար՝ որովայնի և ստեանց աճումն , ձայնի նուազ փոփոխութիւն , և երկու սեռի համար ուրիշ մասնաւոր և ծանօթ ստացումներ :

Կենաց այս շրջանին մէջ աճումն օր ըստ օրէ իւր կատարելութեան կը դիմէ և մարմինը փութով զգալի տարբերութիւն մը ստանալով կը հասնի այն կէտին , ուր պէտք է մնայ միշտ : Ընդունում Սննդարար հիւթերը այլ եւս աճման այնքան հարկաւորութիւն չունենալով կենդանական սերմն կ'աղմկելու կը ծառայեն : Մննդագործութեան և տեսակի յաջորդութեան գործարանները կը կատարելագործուին երկու սեռի մէջ , կիրքերը եւանդուն , խորհուրդները հասուն , և 'ի մանկութենէ գործադրուած սովորութիւնները , մանաւանդ սոյն պարբերութեան վերջին տարիներուն մէջ , հաստատուն և դժուարափոխելի վիճակ մը կ'ընտանան : Երբ այս կատարելութիւնները ստացուին , ամուսնութեան ատուածագիր խորհուրդը կարելի է կատարել , որոյ նպատակն է Արարչի ձեռագործը բացմանը և ներքին կենդանական զօրութիւնը՝ կենդանի էակներ յառաջ բերելու գործածել : Քանի որ զանազան կլիմայի համեմատ աճումն կանուխ կամ ուշ կ'ընտանայ իւր կատարելութիւնները , ըստ այսմ և ամուսնութեան պայմանաժամը կը տարբերի զանազան գաւառացի համար : Հասարակօրէն տաք երկիրներու մէջ կանուխ , իսկ ցուրտ գաւառներուն

մէջ աւելի ուշ կ'ընտանայ այս ատուածութիւնը : Այս բարի նպատակաւ միայն ամուսնութիւնը օգտակար կըրնայ լինիլ , իսկ երբ անսանձ կըբերն ու հեշտութիւնները խղեն չափաւորութեան սահմանը , անթիւ վնասներ և մեծամեծ ցաւ ու հիւանդութիւններ մարդկային կեանքը սպառելով , անկարողութեան և մինչեւ իսկ մահուան կը դատապարտեն , հակառակ տեսակին բաղմանը նպատակին , որոյ օրինակները բաղմութիւ են դժբաղդաբար : Այս բարենպաստ խորհուրդը զոր Եկեղեցին և Ս. Աւետարանը նշանաւորած են , Աստուածային բանիւ իւրաքանչիւրի կամաց թողուած է , որում միմիայն ուղիղ և հասուն մտածութիւնները կարող են առաջնորդել :

Այս պարբերութիւնը կը տեւէ ընդհանրապէս մինչեւ 23-25 տարին , որ ատեն հասակը կը դադարի աճմանէ , և մարմինը ուրիշ ամեն հասակներէն աւելի ամուր ըլլալուն , մեռնելու քիչ անգամ կը պատահի , եթէ արտաքին պատճառներ տեղի չ'տան :

Գ. Ա. յոռ-իւն :

Մարմինը ստացած է արդէն իւր բարձրութեան կատարելութիւնը . միայն թէ զանազան մասունքները տուկալին բարակ եւ երկայնաձեւ են , ըստ անհատի հետադէմէ միւսը կ'առաւելու , ջրերը կը պնդանան , փորոտիքը կը լեցուին , անդամները կը ձեւակերպին և մինչեւ 36 տարին , մարդկանց համար , մարմինը թէ լայնութեամբ , թէ հաստութեամբ և թէ երկարութեամբ աճման կատարելութեան մէջ է . իսկ կանանց համար աւելի կանուխ : Արք սովորաբար հաստամարմին և ջրաւոր կ'ըլլան , իսկ կանայք փափկա-

մարմին և տկար : Զօրութիւն և մեծութիւն՝ արանց . իսկ վայելչութիւն և գեղեցկութիւն՝ կանանց ձիրք են :

Ահա՛ այս հասակին մէջ մարդը ըստ ամենայնի ստացած է իւր կոչման արժանաւորութիւնը . հարկ է նկատել զայն ուրեմն կենաց այս շրջանին մէջ եւս, դիտել նորա գերիշխանութիւնը, որ արտաբոլստ իսկ ակներեւ կը փայլի իւր զրից, կերպարանաց և ընթացից մէջ : Ամենայն ինչ նորա իշխանութիւնը կը ներկայացնեն երկրի վրայ, ամենայն ինչ կը ցուցնեն նորա գերագանցութիւնը երկրային ամեն կենդանի գոյացութեանց վրայ : Իւր ուղիղ և բարձրագիւր հասակաւն եւ մարմնայն յօրինուածովն հրամանատարի կերպարանք մը կը ներկայացնէ . գլուխը ՚ի վեր յերկինս կը հայի իւր Արարչի հետ խօսակից լինելու համար և վեհապանձ գէմք մը կը կրէ, ուր գրոշմուած է իւր արժանաւորութեան կնիքը, ուր յայտնի նշանագծերով նշկարուած է հոգւոյն պատկերը : Ներքին զգացմանց՝ հոգւոյ գործողութեանց զօրութիւնը կը թափանցէ, կ'անցնի նիւթական գործարանաց մէջէն և երկնային հրով մը կը վառէ և կը կենդանայնէ երեսաց ամեն գծերը, որք ճշգուծեամբ կը պատմեն հոգւոյ ներքին կրքերը : Իւր վայելուչ և վեհ գիրքը, հաստատուն և համարձակ գնացքը, իւր բովանդակ յօրինուածքը՝ վկայ են իւր աղնուութեան և բարձր արժանաւորութեան . ոտից ստորին ծայրերով միայն կը շոչափէ երկիրն, ՚ի հեռուստ միայն կը զխոհէ զայն և գոգցես կ'ուղէ յայտնել նմա իւր արհամարհելն զաշխարհ, և փափաքելն ՚ի վեր յերկինս՝ գէտ ՚ի հոգեղինաց բնակարանը : Իւր բազուկները իբր նեցուկ չեն ծառայեր մարմնոյն, իւր ձեռքերը գետին կոխելու համար

չեն, պէտք չէ որ նոքա յաճախակի ընդհարմամբ կորուսանեն իրենց նրբութիւնը և զգայնութիւնը, նորա աւելի բարձր պաշտոնի մը կոչուած են, նոքա պիտի ծառայեն մարդոյ կամաց հրամանները յայտնելու, իրերը շոչափելու, խոչնդոտները գլելու, վնասաբեր դիպուածներն ու ընդհարումները արգիլելու, հաճոյական իրերը գրկելու, բռնելու և միւս զգայարանաց հաղորդելու համար :

Երբ հոգին հանգարտ է, դիմաց ամեն գծագրերը հանգիստ վիճակի մէջ են . սոցա համաձայնութիւնը, միութիւնը և ամբողջութիւնը՝ մոռածութեանց քաղցր ներդաշնակութեան և ներքին հանգարտութեան նշանակ են : Իսկ երբ հոգին, զանազան առթիւ, խռոված լինի, մարդոյ դէմքը կենդանի պատկեր մը կը դառնայ, ուր նկարուած կ'ըլլան, այնչափ փափուկ որչափ ճարտար կերպիւ, հոգւոյ ամեն շարժումներն, որոյ կենդանի և արագ ազդեցութիւնները, յսկամայից իսկ, առանձինն բուռն նշաններով կ'ազդեն դիմաց վրայ և կը յայտնեն ներքին գաղտնի խռովութեանց պատկերը :

Աչքերը, որք ամեն գործարաններէ աւելի յարաբերութիւն ունին հոգւոյ գործողութեանց հետ, այս պաշտաման մէջ ամենայաջող դեր մը կը խաղան : Աչքը կը բացատրէ ամենա կենդանի կրքերն և ամենախռովայն դրդումները, ինչպէս նաեւ ամենաքաղցր շարժումներն և ամենափափուկ զգացումները . նա կը ներկայացնէ զանոնք ամեն զօրութեամբ եւ ամեն ճշգուծեամբ : Աչքը կ'ընդունի եւ կ'անդրադարձէ մի և նոյն մամանակ մոռածութեանց լոյսը և զգացմանց ջերմութիւնը . նա՛ մոտաց զգայարանն և իմացականութեան լեզուն է :

Աչքերէն յետոյ, Յօնքերը գլխաւոր ծառայութիւն մը կը մատուցանեն այս պաշտաման մէջ : Յօնքերը պատկերի մը ստուերներն են, որք նաքա գոյները և ձեւերը կը յայտնեն և կը կենդանացնեն : Արտեւանունքը պաշտօնակից կրնան համարուիլ յօնից : Զակատը՝ գիմաց մեծագոյն մասն է, որ կ'օգնէ նորա գեղեցկութիւն տալու, եթէ ձեւաւոր և չափաւոր մեծ, լայն, կոր կամ տափարակ լինի : Քիթը գիմաց գուրս զցուած մասն է, որ քիչ շարժուն ըլլալով միմիայն բուռն կրքերը կրնայ յայտնել և աւելի գիմաց ձեւաւոր գեղեցկութեան՝ քան թէ կրկից բացատրութեան կը ծառայէ : Բերանն ու շրթունքները, աչքերէն յետոյ, երեսաց ամենաշարժուն եւ բացատրող մասերն են : կրքերը կը ներգործեն ասոնց վրայ և ասոնց ըստացած տարբեր ձեւերովն ու շարժումներովը կը բացատրուին : Ձայնի գործարանը աւելի կը կատարելագործէ զոսոնք, և միւս ամենէն աւելի կենդանի և խօսուն կը գործէ : ամեն բառ, ամեն հնչիւն, ամեն ձայն տարբեր շարժումներ յառաջ կը բերեն շրթանց վրայ, և այս շարժումներն, որչափ արագ և խառն ըլլան, միշտ զգալի տարբերութիւններ ունին իրարմէ : տեսնուած են խուլ մարդիկներ, որք շրթանց տարբեր շարժումներուն ուշ գնելով հասկցած են խօսողի միտքը : Ծնօտից միայն վարկնը շարժուն է : այս եւս միայն բուռն կրքերը կրնայ յայտնել : վիշտը, հաճութիւնը և ձանձրոյթը՝ յօրանջումն կը պատճառեն, որ ծնօտից բացուելովն կը կատարուի : վիշտը և հաճութեան ատեն յօրանջումը ուժգին և արագ, իսկ ձանձրոյթի ատեն թուլ և անզոր կ'ըլլայ :

Երբ խիստ ցանկալի կամ առեղի իր մը մտածութեան մէջ լինայ, ներքին շարժում մի տեղի կ'ունենայ առագաստին վրայ, որ թղթերուն հաղորդուելով կը պատճառէ զօրաւոր և արագ շնչառութիւն մի, որ է հառաչանք : Երբ հոգւոյն բաղձանքը անկատար մնայ, հառաչանքները կը կրկնուին, տրտմութիւնը, որ հոգւոյ վիշտն է, կը յաջորդէ առաջին շարժմանց, եւ երբ վիշտը խորին և տեւական ըլլայ՝ արտասուքը կ'ըսկսի հոսիլ, շնչառութիւնը կ'ամայարագ յաջորդութեամբ, ուժգնութեամբ և ձայներով կը կատարուի, որ կը կոչուի կիծկանք : երբ հեծկանքը տեւական ու շարունակեալ ըլլայ, կ'ըսուի որք կամ լալումն :

Ծիծաղը, որ երբեմն ընդմիջեալ և շարունակական ձայներով և շրթանց բացուելովը կամ երկարելով կը կատարուի, ներքին հաճութեան և գոհունակութեան նշան է : երբեմն ևս մերժումն կամ ծաղրածութիւն կը յայտնէ, բայց այս պարագայիս մէջ, վարի շուրթն վերինին յենլով կը բարձրացնէ զայն փոքր ինչ : Այտերը գիմաց միւս ձեւ մասերն են, որք ինքնին շարժում մը չունին, այլ միայն իրենց յակամաց ստացած տարբեր գոյներով կը բացատրեն ներքին զանազան կրքերը : Ասոնք, ինչպէս նաեւ կզակները, ալիանջներն և քունքերը աւելի գիմաց գեղեցկութեան՝ քան ներքին զգացմանց բացատրութեան կը ծառայեն : Ամօթոյ, բարկութեան, հպարտութեան և ուրախութեան ատեն կարմրագոյն կը ներկուին այտերը : իսկ երկիւղի սարսափի եւ տրտմութեան ատեն՝ դեղնագոյն : Գոյներու այս փոփոխութիւնները իսպառ աղատ են կամաց իշխանութենէ : Գլուխն եւս, իւր ամբողջութեամբ, տարբեր կրկից համեմատ զանազան գիրքեր կ'ըստա-

նայ . խոնարհութեան , պատկառանայ
և տրտմութեան ատեն վար կախուած .
թուլութեան և գթութեան ատեն մի
կողմն հակած . յանդգնութեան ատեն՝
բարձրացած . յամառութեան ատեն՝
ուղիղ և անշարժ . զարմացման ատեն՝
սակաւ ինչ դէպ ետեւ ծռած . մերժ-
ման , ծաղրածութեան , բարկութեան
և ցասման ատեն՝ երկու կողմը յաջոր-
դական շարժումներով կը տեսնուի .

Խանդաղատանայ , ուրախութեան ,
սիրոյ , ամօթոյ և գթութեան ատեն
աչքերը կը ցցուին , առատ խոնա-
ւութիւն մը զանոնք կը մթադնէ եւ
արտասուք կը վազեն : Տրտմութեան
ատեն՝ բերնի երկու կողմերը կ'իջնան ,
վարի շուրթն կը բարձրանայ , կոպե-
րը կիսով չափ կը փակուին , բիբը կը
բարձրանայ և վերի կոպերուն տակ կը
ծածկուի կիսով , դիմաց ջղերը կը
թուլնան և դէմքը աւելի երկարած
կ'երեւի : Երկիւղի , սարոստի ատեն՝
ճակատը կը խորշմի , կոպերը կարելի
եղածին չափ կը բացուին , բիբը վարի
կոպերով կը ծածկուի կիսով , բերանը
կը բացուի , շրթունքը կամփոփին եւ
վարի ու վերի ատամները կը տեսնու-
ւին : Արհամարհանայ և հեգնութեան
ատեն՝ վերի շուրթն կը բարձրանայ մի
կողմէն , ատամները կը տեսնուին ,
մինչդեռ շրթանց միւս կողմը ծիծաղի
փոքր շարժումներ կը տեսնուին , քի-
թը բերնի բացուած կողմէն կը խոր-
շմի և կը պրկի . նոյն կողմի աչքը գը-
րեթէ կը փակուի և երկու բիբերը 'ի
վայր կը հակին : Նախանձի , փափա-
քանայ և հեգնութեան ատեն՝ յծն-
քերը կ'իջնան , կոպերը կը բարձրա-
նան , բիբերը 'ի վայր կը հակին , վերի
շուրթն կը բարձրանայ երկու կողմէն
և ծայրերը դէպ 'ի վար կը ծռին փոքր
ինչ , իսկ վարի շրթան միջնավայրը կը
բարձրանայ : Ծիծաղի ատեն՝ բերնի

երկու ծայրերը կ'երկարին և կը բարձ-
րանան , այսերու վերին մասերը կը
ցցուին , աչքերը առաւել կամ նուազ
կը բակուին , վերի շուրթն կը բարձ-
րանայ , վարինը կը ցածնայ , բերանը
կը բացուի եւ քթին խորշերը վարի
կողմէն կ'ընդլայնին :

Բաց յայտանէ , բազուկները , ձեռ-
քերը և բովանդակ մարմինը կը մոտ-
նակցին կրքերը յայտնելու պաշտօնին
և կարելի է զանոնք եւս ներքին զգաց-
մանց երկրորդական կամաւոր մեկնիչ
ներ անուանել : Օրինակի համար , ու-
րախութեան ատեն՝ ինչպէս աչքերը ,
գլուխը , նոյնպէս եւ բազուկները ,
ձեռքերը և բովանդակ մարմինը արագ
շարժման մը մէջ կը տեսնուին . իսկ
թուլութեան կամ տրտմութեան ա-
տեն՝ թոյլ և դանդաղ շարժումներ մի-
այն կ'երեւին : Սիրոյ , ըղձանայ եւ
յուսոյ ժամանակ՝ գլուխը կը բարձ-
րանայ , աչքերը յերկինս կ'ուղղուին
հայցուածք մի ընելու ձեւով , բա-
զուկները կը տարածուին , ձեռքերը
կը բացուին և մարմինը յառաջանա-
լով գոզցես սիրելի առարկայն գրկե-
լու կը դիմեն : Ընդհակառակն , եր-
կիւղի և ատելութեան ժամանակ՝ ձեռ-
քերը յառաջ կը դիմեն մերժման ,
ընդդիմանալու և հեռացնելու ձեւով
և մարմինը դէպ ետեւ կը կասի : Այս
ամեն շարժումները կամաց ազդեցու-
թեամբ ներքին կրքերը յայտնելու կ'ա-
ժանդակեն :

Բոլոր կրքերը հոգւոյ շարժումներ
լլալով , որոց շատերը վերաբերու-
թիւն ունին զգայարանաց հետ , կըր-
նան մարմնոյ մանաւանդ դիմաց շար-
ժումներով գուշակուիլ : Բայց կարելի
է մարմնոյն ձեւէն՝ գեղեցիկութենէ
կամ տգեղութենէ , հոգւոյն բնու-
թիւնը՝ լաւութիւնը կամ յոռութիւ-
նը հետեւեցնել , ինչպէս տարածուած

էր այս նախապաշարումը նախնեաց
մէջ . ամենատգեղ անձի մէջ կարելի է
ամենաբարի զգացումներ և հոգի դրտ
նել և փոխադարձաբար . մարմնոյ ձե-
ւերը երբէք յարաբերութիւն չունին
հոգւոյ բնութեան հետ . հոգին ան-
նիւթ և անձեւ է :

Ասանք մարդոյ կենաց պատմութե-
նէն արտաքոյ , լոկ իւր ներքին և ար-
տաքին շարժմանց յարաբերութեան
նկարագրութիւններն էին , որք մեծաւ
մասամբ կենդանեաց վրայ կը պակսին :
Այսպէս մարդկային մարմնոյ մէն մի
մասունքն մեծ տարբերութիւն ունին
կենդանեաց կազմութեանէն , որոց ման-
րամասն բաղդատութիւնը աւելորդ է
աստանօր ներկայացնել :

Ինչպէս յիշեցինք մարդը կենաց այս
երորդ շրջանին մէջ ստացած է իւր
ներքին և արտաքին կարողութեանց
կատարելութիւնը . զօրութիւնները ի-
րենց բարձրագոյն կէտին հասած են .
խորհուրդ , դատողութիւն , իմացա-
կանութիւն , ոյժ , բնական և բարոյա-
կան տաղանդներ վերջին կէտին վրայ
են . մանկութեան և պատանեկու-
թեան սերմերը , թէ՛ բարի և թէ՛ չար ,
պտղաբերութեան վիճակի մէջ են :
Հարկ է այսուհետեւ վերստին սոյն
բարձր աստիճաններէ վար իջնալ հետ
զհետէ : Տարիքը 36—40 ամեայ շրջանը
բոլորեց :

(Շարունակելի է :)



ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԵՒ ՏԻԵԶԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՊԱՐԶ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն , տես թիւ 6 :)

ԳԼՈՒԽ Է .

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ՄԱՐՄՆՈՅ

Շարունակութիւն :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՔ ՄԱՐՄՆՈՅ

Բիշիւցայի պատմութիւնը . — Գործարա-
նաւոր եւ անգործարանաւոր մարմնե-
ներ . — Բիւրեղացում . — Ծակոտկենու-
թիւն . — Առաձգութիւն . — Ճնշականու-
թիւն . — Բաժանականութիւն :

ՕՐ . ԹԱԳՈՒՀԻ . — Բիշիւցան կարգա-
յաճ էք :

ՄԱՐԻԱՄ . — Ո՛չ , օրիորդ , ի՞նչ է Բի-
շիւցան :

ՕՐ . ԹԱԳ . — Սբանչելի գիրք մ'է ,
որոյ մէջ կը պատմուի բանտի մը բա-
կին մէջ բուսած փոքրիկ տունկի մը
պատմութիւնը : Այս բակը խեղճ կա-
լանաւորի մը շրջագայութեան յատ-
կացած էր , որ տեսաւ այս տունկը
երբ անոր առաջին երկու տերեւները
տակաւին ձեր ճիւղթ մասին եղուն-
գէն փոքր էին : Զայն ջրեց , խնամեց ,
սիրեց և Բիշիւց (փոքրիկ) անուանեց :
Երբ Բիշիւցան քիչ մը մեծցաւ , իւր
կնքահայրը վերցուց այն երկու մեծ
սարքարերը , որոց մէջ ծնած էր նա
և իբր անձուկ որբանի մը մէջ պար-
փակուած : Բիշիւցա այսու աղատու-
թիւն ստանալով՝ իւր արմատներն
երկրի խորերն արձակեց և իւր ոստե-
րը դէպ 'ի երկինք բարձրացուց . յետոյ
օր մ'իւր մէկ ոստին վերայ գեղեցիկ

ծաղկի մը փթթեմն տեսնուեցաւ : Կալանաւորն այնպէս սիրեց այս ծաղիկը ինչպէս հայր մ'իւր որդին : Բիշխօլաօր ըստ օրէ աճելով՝ կը գեղեցկանար : Երբ կալանաւորը բանտէն արձակուեցաւ, իւր հետ տարաւ զայն : Բիշխօլա տեղափոխուելով՝ նոր ծաղիկներ տըլաւ, որոց սերմերը հովէն ցրուելով՝ ուրիշ տեղեր ալ փոքրիկ Բիշխօլաներու ծնունդ տուին :

ՅԱՍՈՒՐ. — Կալանաւորին Բիշխօլան ինչպէս կըցաւ ինքնին բակին մէջ բուսնիլ առանց տնկուելու կամ ցանուելու :

ՕՐ. ԹԱԳ. — Հօլը քանի մը սերմեր, ով գիտէ թէ ուրիշ, թերեւս չըջակներէն, առնելով՝ կալանաւորին բաւ կը բերսծ ձգած էր. վասն զի պէտք չէ կարծել, որ տունկերն առանց ցանուելու կը բուսնին. դաշտերուն մէջ խոտ մը չը բուսնիր մինչեւ որ նման խոտի մը սերմը գետին չ'իյնայ : Երբ սերմերն անգամ մը դետին իյնան, կ'ուռնին, արմատ կը ձգեն եւ ոստեր կ'արձակեն : Արմատներն գետնին մէջ իրենց սնունդը ծծելով կ'աճին. իսկ ոստերն ու տերեւներն օդին և արեւին մէջ կը սնանին : Մէկ խօսքով տունկերը կ'ապրին. որովհետեւ սերմէ մը ծնիլը, սնանելով աճիլը, ուրիշ սերմեր արտադրելը և չորնալով մեռնիլը ոչ այլ ինչ է, բայց եթէ ապրիլ, Թէպէտ այս կեանքը կենդանեաց կենաց չափ բազմակողմանի չէ. բայց վերջապէս ապրիլ է :

Հարկ է խոստովանիլ, որ մեծ տարբերութիւն կայ առնակի մը և օրինակի համար. քարի մը մէջ, որ ոչ ուրիշ քարէ մը իլծնէ, ոչ մեծնալու համար իլմանի, ոչ իլմանի, և վերջապէս հարկաւոր դարեր կրնայ մի և նոյն մնալ եթէ ոչ որ չը մօտի իրեն :

Եւ որովհետեւ բոլոր տեսնուած

և չօշարուած բաները մարմն կը կոչուին, ուստի բնութեան մէջ մարմիններն երկու տեսակի կը բաժնուին, այն է ապրող և չապրող մարմիններ :

Եթէ զձեզ յոգնեցնելէ չը վախճալի, այս երկու տեսակ մարմնոց յատկացեալ անունները պիտի ըսէի ձեզ :

ՄԱՐ. — Որո՞նք են այդ անունները, օրիորդ :

ՈՐԻ. ԹԱԳ. — Կենդանիներն ապրելու համար գործարաններ ունին, այն է բերան, ոտամոքս, սիրտ, եւ այլն. տունկերն ալ ապրելու համար գործարաններ ունին, այն է արմատներ, ոստեր և տերեւներ : Կենդանիներն ու տունկերը ապրելու համար գործարաններ ունենալով՝ գործարանաւոր մարմին կը կոչուին. իսկ քարերը, մետաղները, ջուրը, օդը, վերջապէս այն ամեն բաները, որոնք չեն ապրիր և գործարաններ չունին, անգործարանաւոր մարմին կը կոչուին :

ՄԱՐ. — Այս անունները շատ բնական կ'երեւին :

ՕՐ. ԹԱԳ. — Այո՛, երբ մարդ անոնց նշանակութիւնը լաւ հասկնայ :

ՅԱԿ. — Այս չ'ապրող անգործարանաւոր մարմիններն անօգուտ կ'երեւին ինձ :

ՕՐ. ԹԱԳ. — Իրաւ կըսես. — սակայն տակաւին ջրոյ վերայ միայն խօսած եմ ձեզ, արդէն տեսանք թէ՛ ինչպէս ջուրն սառի և շոգիլ կը փոխուի, միթէ օգտակար չըլլա՞ր նոյնպէս գիտնալ թէ՛ ջուրն ինչպէս ամուր, անձրեւ, մէգ, ցոլ, ձիւն, կարկուտ, եղեամն և սլաղ կ'ըլլայ, որովհետեւ ջուրը կրնայ այս ամեն ձեւերն ստանալ : Եւ միթէ մեզ օգտակար չէ՞ գիտնալ թէ՛ շոգին ինչպէս կը կազմուի եւ ինչպէս 'ի գործ կ'ածուի, որպէս զի կարենանք ինքնին շոգի կազմել եւ անով շոգեկոտքերը քաղցնել :

ՅԱԿ. — Ուրեմն շագեկառքն քայլե-
ցընողը շագիւն է :

ՕՐ. ԹԱԳ. — Անտառակոյս :

ՅԱԿ. — Ի՞նչպէս :

ՕՐ. ԹԱԳ. — Ասիկա օգտակար է
ուրեմն ձեզ :

ՅԱԿ. — Այո՛, օրիորդ :

ՕՐ. ԹԱԳ. — Շատ լաւ, ուրիշ օր
մը պիտի ըսեմ ձեզ : Երբ մարդ բան
մը չը գիտեր, կարծէ թէ ոչինչ չըկայ,
կամ շատ քիչ բան կայ սորվելու, բայց
յետոյ որչափ սորվի նոյնչափ բացորոշ
կը տեսնէ, որ առաջին տեսութեամբ
սննչան կարծած բանը՝ կարեւորու-
թիւն ունի : Հետաքրքիր կ'ըլլայ և կը
փափաքի սորվիլ : Երբ մարդ քիչ մը
սորվի, սւսումն կը սկսի իրեն հաճելի
ըլլալ, և որչափ աւելի սորվի, այնչափ
աւելի կը փարի անոր, որովհետեւ այն
ատեն ամեն բան աւելի օգտակար
կ'ըլլան : Տեսնուած են այնպիսի գիտ-
նականներ, որոց ուսումնասիրութիւնն
այնչափ զօրացած էր ուրիշ ամեն հա-
ճոյքներէ, որ իրենց բոլոր օրերն եւ
գիշերներուն մէկ մասն ուսմանց պա-
րտադրուի կ'անցնէին : Բայց որովհետեւ
սկզբնաւորութիւններն երբեմն քիչ
զուարճալի են, ուստի պէտք է մարդ
քաջաբար աւնու իւր առաջին քայլե-
րը, որպէս զի յետ ժամանակաց ուս-
ման մէջ աւելի հաճոյք եւ օգուտ
գտնէ :

ՅԱԿ. — Ձիւնի նման մէջերնին ասու-
ղեր տեսնուող ուրիշ մարմիններ ալ
կան :

ՕՐ. ԹԱԳ. — Քանի մը մարմնոց մէջ
մասնկաց խումբերն, որ Բիւրեղ կը կո-
չուին, խաղի փոքրիկ քուէի ձեւն ու-
նին :

Ոմանց մէջ փոքրիկ արկղի ձեւով
են, որոց երկայնութիւնը լայնութեան
հաւասար է. բայց բարձրութիւննին
երկայնութենէն աւելի է եւ իրարու

վերայ զրուած խաղի երկու քուէի կը
նմանին :

Ոմանց մէջ երկայն փոքրիկ տուփի
մը ձեւն ունին, որոց երկայնութիւնը,
լայնութիւնը և բարձրութիւնը իրար-
մէ տարբեր են :

Եւ ոմանց մէջ վերոգրեալ ձեւե-
րէն մերթ մէկին և մերթ միւսին կը
նմանին, միայն թէ ասոնց ձեւն այն-
պիսի կերպով երկարած է, որ անկիւն-
ները աւելի երկու հակադիր կողմերը
ձգուած են և իրենց երկու երեսները
կամ բոլոր երեսներն երկայն ձեւ մը
ունին, որ լեղանիւն կը կոչուի :

Եթէ այս բիւրեղներն սեղանի մը
վերայ զատ զատ դնենք, ոմանք վերո-
գրեալներուն նման ուղիղ դիրք կ'ու-
նենան և ոմանք խոտոր, վրին ծայրը
պատին յեցած շարժական սանդիւխ մը
նման :

Վերոգրեալ ձեւերուն որ և իցէ
մէկին նմանող այս բոլոր բիւրեղնե-
րուն եղբայնկիւններն երբեմն կտրուած
կ'ըլլան, որով երեսներն տաշուած
փոքրիկ սիւնակի մը ձեւը կ'առնեն :
Եւ երբեմն ալ վերոգրեալ ձեւերուն,
որ և իցէ մէկին ձեւը կ'առնեն և ի-
րենց երկու հակադիր կողմերն բրգա-
ձեւ կը յանգին (1) :

Այս խումբերէն ոմանք այնքան
փոքր են, որ միայն մանրացոյցով կը
տեսնուին : Զոր օրինակ եթէ այս կեր-
պով հասարակ աղի հատիկ մը դիտենք,
անոր մէջ քսան կամ երեսուն հատ
փոքրիկ խումբեր կը տեսնենք, որոց
իւրաքանչիւրը խաղի քուէի մը ձեւն
ունի : Ուրիշ մարմնոց մէջ այս բիւ-
րեղներն աւելի մեծ են և իրենց ձեւն

(1) Հանքաբանութեան թանգարանաց մէջ եւ
քանի մը վաճառականաց քով Տիւրքիաց այս ամեն
ձեւերուն փայտէ օրինակները կը գտնուին :

աւելի զիւրաւ կը տեսնուի . օրինակի համար ժայռի բիւրեղի մը մէջ այս խումբերն գրեթէ ձեր մատին մեծու թիւնն ունին եւ երեսնին տաշուած ու բրգածեւ յանգած փոքրիկ սիւնակներու ձեւն ունին :

Երբ շաքարագործի մը խանութն երթաք , վանաչաքար ուղեցէք և չը կերած զայն լաւ մը դիտեցէք , որ աւտեն տարբեր մեծութեամբ եւ ձեւով բիւրեղներ պիտի տեսնէք : Երբ դեղարանի մ'առջեւէն անցնիք , քիչ մը կեցիք և ընդհանրապէս լայնաբերան շիշերու մէջ ՚ի ցոյց դրուած զանազան գոյներով գեղեցիկ բիւրեղներն նկատեցէք : Վերջապէս երբ հանքաբանութեան թանգարան մը երթաք , լաւ դիտեցէք , ուր ամեն ձեւով և ամեն մեծութեամբ անհուն օրքանութեամբ բիւրեղներ պիտի տեսնէք :

Ընդհանրապէս երբ մարմին մը դանդաղութեամբ հեղուկ վիճակէ հաստատուն վիճակի անցնի , իւր մասնիկները կանոնաւոր խումբեր կամ բիւրեղներ կը կազմեն . այս երեւոյթը բիւրեղացումն կը կոչուի : Ինչպէս արդէն ըսինք բիւրեղացման ձեւերը բազմաթիւ են , սակայն անոնց ձեւերուն մէջ առաջին ակնարկով տեսնուած այս տարբերութիւնները , երբ լաւ դիտենք , որ վերոգրեալ ձեւոց որ և իյնէ մէկուն հետ վերաբերութիւն մ'ունին : Ուրեմն բիւրեղաց առաջին խումբերը մասնիկներու միաւորութեամբ կը ձեւանան , յետոյ այս խումբերն ալ միանալով աւելի մեծ խումբեր կը կազմեն , որոնք երբեմն խիստ կանոնաւոր ձեւեր կ'ունենան և շատ անգամ անկանոն :

Հաստատուն վիճակի անցնելով չը բիւրեղացող մարմնոց մէջ մասնիկները պարզապէս իրարու մօտենալով իրենց բարձրագոյն փոքրիկ միջոցներ կամ ծակ-

իւնէր (1) կը թողուն :

ՅԱԿ.—Քարին մէջ ալ ծակալիք կան , ՕՐ . ԹԱԳ.—Անտարակցս : Եթէ չէք համոզուիր , քարի մը վրայ մեղան թափեցէք և սոսի մը յետոյ նոյն քարը քերեցէք , պիտի տեսնէք որ մեղանը քարին մէջ մտած է , անկարելի պիտի ըլլար , եթէ քարը ծակալիք չունենար :

ՄԱՐ.—Ամեն հեղուկ մարմին կըրնայ հաստատուն վիճակ առանալ :

ՕՐ . ԹԱԳ.—Կը կարծուի թէ ամեն մարմին կրնայ յաջորդաբար հաստատուն , հեղուկ և կազային վիճակ ըստանալ , եթէ կարելի ըլլայ զոմանս սաստիկ պաղեցնել և զոմանս սաստիկ տաքցնել . վասն զի եւ ոչ մէկ մարմին մի և նոյն ջերմաստիճանի մէջ իւր վիճակը չը փոխէր : Զորօրինակ ջուրը սառեցնելէն աւելի ցրտութիւն պէտք է ձիթալիզը սառեցնելու համար , եւ կապորը հալեցնելէն աւելի ջերմութիւն պէտք է ոսկին և արծաթը հալեցնելու համար : Սառը հալեցնելու համար շատ քիչ տաքութիւն պէտք է և գիտէք արդէն , որ արեւու շառաւիղ մը բաւական է ձիւնը հալեցնելու համար :

ՄԱՐ.—Կարելի է ուրեմն ոսկին եւ արծաթը հալեցնել :

ՕՐ . ԹԱԳ.—Անշուշտ , նոյնպէս նաեւ երկաթը , պղինձը , անագը , զինկը և այլն : Այս մետաղները հեղուկ եղած ժամանակին միայն կաղապարներու մէջ կը թափուին և սրաղելով հաստատուն կ'ըլլան . և երբ կաղապարներէն հանուին , իրենց ստացած ձեւը կը պահպանեն : Ահա այսպէս կը շինուին թնդանութները , զանգակները և ամեն տեսակ թափու իրերը :

ՄԱՐ.—Բոլոր շոգիները ջրոյ շոգիին նման են :

ՕՐ . ԹԱԳ.—Ամենքն ալ քիչ կամ

(1) Տես նախորդած ցուցնի մէջ :

շատ ճշգրտան են, այսինքն կրնանք դա-
նանք սեղմել և փոքրիկ միջոցի մը մէջ
մեծ քանակութիւն մը անփոփոխել. նոյն
պէս նաեւ աստիճան են. վասն զի որչափ
ճնշուին՝ նոյնչափ իրենց տարածուե-
լու ջորութիւնը կ'աւելնայ, իրենց ընդ-
դիմացող արգելքը վերցնելու կամ
խորտակելու համար, եթէ այս ար-
գելքը աւելի ջորաւոր չըլլայ. որով
հետեւ շոգւոյ մասնիկները միշտ զի-
րար կը վտնեն և իրենց ունեցած մի-
ջոցը կը գրաւեն: Մասնիկներն այս
կերպով գրեթէ յանհունս կը բաժնը-
ւին. ուստի կը հետեւի թէ կազերը
շատ Բաթմանիան են նաեւ: Այս բաժա-
նականութիւնը փորձելու համար, սե-
նեակիդ մէջ, օրինակի համար, եթերի
կաթիլ մը թափէ. այս կաթիլը ան-
միջապէս կը շոգիանայ և սենեակիդ ո՞ր
կողմն ալ ըլլաս, մասնիկներու ներգոր-
ծութիւնը կը զգաս:

ՄԱՐ. — Ուրեմն այս մասնիկները
պէտք է որ շատ փոքր ըլլան:

ՕՐ. ԹԱԳ. — Հաստատուն և հեղուկ
մարմնոց մէջ մասնիկները չափազանց
փոքր են. որով այս մարմիններն ալ
խիստ Բաթմանիան են: Օրինակի համար
եթէ պուտ մը մելան կաթեցնենք ջը-
րով լի կոնքի մը մէջ, այս ջուրը բոլ-
րովն սեւ գոյն մը կ'առնէ. այսու
կրնանք դատել թէ՛ մելանի մասնիկնե-
րն որչափ փոքր եղած պիտի ըլլան.
որովհետեւ բաժնուելով՝ կարողացան
կոնքի պարունակած բոլոր ջուրին հետ
խառնուիլ: Ապակիին բաժանականու-
թիւնը ցուցնելու համար, բնագիտու-
թեան թանգարանի մը մէջ ապակիէ
կեղծեամ մը տեսած եմ, որոյ մազերը
մարդոյ գլուխը զարգարող ամենա-
նուրբ մազերէն ալ աւելի նրբագոյն
էին:

ՄԱՐ. — Հաստատուն և հեղուկ մար-
միններն ալ առաձիգ և ճնշական են:

ՕՐ. ԹԱԳ. — Հաստատուն մարմին-
ներէն ոմանք շատ առաձիգ են, բայց
շոգիէն տարբեր կերպով: Ձոր օրինակ
քաւչուն առաձիգ է. վասն զի երբ
ղայն ջորութեամբ մը ճնշենք կամ ձը-
գենք, այս ջորութիւնը դադրածին
պէս ինքնին իւր նախկին ձեւը կ'առ-
նէ. նոյնպէս պողպատէ թիթեղ մը
տարբեր առաձգութիւն մ'առնի. վա-
սնն զի երբ զայն ջորութեամբ մը ձը-
գենք, այս ջորութիւնը դադրածին
պէս, ինքնին իւր նախկին ուղղու-
թիւնը կ'առնէ: Հաստատուն մար-
մինները կաղերէն, քիչ ճնշական են, և
հեղուկներն ալ՝ հաստատուններէն:
Ֆլորանսի մէջ երկու ջրհանադործներ
օր մը ոսկիէ սնամէջ գունտի մը մէջ
ջուրը ճնշել ուղելով՝ մեծ ջորու-
թեամբ գունտը ճնշեցին. բայց մէջի
ջուրը փոխանակ սեղմուելով՝ փոքրիկ
միջոցի մը մէջ պարունակուելու, ոսկե-
ւոյ ծակախներէն դուրս ելաւ:

ՄԱՐ. — Շոգիներն ալ ծակափք ու-
նին:

ՕՐ. ԹԱԳ. — Անշուշտ. որովհետեւ
իրենց մասնիկներն իրարմէ քիչ կամ
շատ կը հեռանան. կամ իրարու կը
մոտենան. հետեւաբար իրենց ծակ-
ախներն այնչափ մեծ կ'ըլլան, որչափ
քիչ ճնշուած ըլլան:

ՄԱՐ. — Հապա հեղուկները:

ՕՐ. ԹԱԳ. — Հեղուկները քիչ ծա-
կոտկէն են. որովհետեւ խիստ քիչ
ճնշական են:

ՄԱՐ. — Հապա հաստատուն մար-
մինները:

ՕՐ. ԹԱԳ. — Ոմանք շատ ծակոտկէն
են և ոմանք քիչ: Օրինակի համար ջը-
րոյ պարզութեանը քարերը խիստ ծա-
կոտկէն են և այս ծակախներն ջրոյ
մասնիկներէն մեծ են. իսկ ջուրը պղ-
տորող մանր մարմիններէն փոքր: Յա-
կոյ, դու որ սորվել կարելի եղած ա-

մեն բան ուսանելու օգտակարութեան վրայ մերթ ընդ մերթ կը կասկածիս, այս վերջին օրինակով պիտի համոզուիս, որ եթէ բոլոր աշխարհ քեզ նման անտարբեր ըլլար, քարին ծակոտկէնութիւնը անծանօթ պիտի մնար և անով պարզութեան շինելու գիւտը տեղի չը պիտի ունենար և դու որ ձմեռը մեծ քաղաք մը կը բնակիս, ուր վճիտ ջրոյ աղբիւրներ չը կան, դատապարտուած պիտի ըլլայիր աղտեղի ջուրեր խմելու:

Մարմնոց այս ծախսիւններէն, առօրինակներ, ճնշաններ և բախանալաններ՝ մարմնոց ընդհանուր յափտիւնները կը կոչուին, որովհետեւ ամեն մարմին, ինչպէս արդէն տեսանք, քիչ կամ շատ այս յատկութիւններն ունի:

(Շարունակելի:)

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Ի Սուրբ Էջմիածին, 1876 Յուլի 20.

(Շարունակութիւն, տես թիւ 6:)

Զարմանալին այն է որ Մալականները օտար երկիրներէ գաղթած, մանաւանդ թէ հալածուած, իրենց ժրաջան աշխատութեամբ բան կարգաւորելէն զինի, բաւականի հարստացած և ապահով կերպիւ կ'ապրին. իսկ Հայք որ բնիկ երկրին տէրը պիտի լինին, մնացած են այդպիսի ողորմելի կացութեան մէջ. պատճառը ոչ այլ ինչ է, եթէ ոչ իրենց անհոգութիւնը և անտարբերութիւնը, խափանելի և այսպանելի այն սովորութիւնը, որ մէջերնին իբրեւ առած եղած է, չստեմ օրէնք, մեր նախնիներէն այսպէս փեսայ էին. թերևս նախնիք ըստծնին այն պիտի լինի՝ որ Պարսկական և այլ զանազան աղգաց

բռնութեանց ժամանակ իրենց նախնիքը այդ յետին թշուառութեան հասուցած են, և իրենց ալ ժառանգ մը նացած է. այլ այժմ այդ ժամանակները անցած են. կան նաեւ նախնի սերունդէն մնացորդներ քաջ և զօրեղ առողջ հասակով երիտասարդներ, անուանի ձիալարժութեան և զինաշարժութեան մէջ. ուսմանց և քաղաքակրթութեանց մէջ վարժ և գործոն անձինք ևս շատ կը գտնուին, որոնք թէ՛ Տէրութեան պաշտօններու և թէ՛ տուր և առիկ գործերու մէջ յառաջացած են: Այս փոքրիկ գիտողութիւնը ընելէն զինի կը դառնանք մեր նպատակին: Աստի փութով մեկնելով՝ կանուխ ժամանցինք Մալականաց գիւղ մի որ գետակին ափունքը ձորակին մէջ շինուած է: Մալականք անտառէ պարապ մը նացած լեռներու կողերը ըստ կարի մշակած են, կանայք առ տնին գործս ժիր և աշխատասէր, տարազ զգեստուց և լեզու իրենց հայրենեացն է, արեւելեան լեռան ստորոտը բարեհամաղբիւր մի կը բոխի: Դիտողութեան առնելու արժանաւոր կետը սա է: Երեկոյին այս սակաւաթիւ Մալականաց հօտը, արջառաց և երկվարաց նախիրը արօտէն դառնալով եկան, ամենքեան պարարտք և առողջ, իւրաքանչիւրը յատկացեալ տուններու եւ գոմերու բաժնուեցան, արդիւնաբեր իւրաքանչիւր իւր տեսակին մէջ: Բընակչաց սակաւութեան նկատմամբ հարստութիւնը շատ էր, և զարմացման արժանի, սորա հալածեալ և սքսորեալ մարդիկ, երբ այսպիսի բնակութիւն հաստատեցին, և երբ այս քան կենդանիներ դարմանեցին և աճեցուցին, և այսօր մեծ հարստութեանց տէր եղած հանգիստ կ'ապրին. ուրեմն աշխատութիւնը անտեսագիտութեան հետ լծորդելով ամեն

դժուարութեանց կը յաղթէ, և այսպիսի բարօրութիւն յառաջ կը բերէ, և այս գիւղական կեանքը, թշուառ քաղաքացւոց կեանքէն շատ խիստ վերատեսանելի է:

Գիշերը մեր սովորութեան համեմատ կառքին մէջ ննջեցինք, բայց սաստիկ ցորտէն անկարելի եղաւ հանգիստ ընել. ստիպուեցանք գիշեր ժամանակ ածասարանօք մեկնիլ և մինչև առաւոտ Տիլիճանի բարձր և անտառու լեռները ելլալ շինուած շէշ և թեք օձապտոյտ ճանապարհով. արեգակը դեռ հաղիւ իւր ճառագայթները արծակած դիմացի լեռներու գագաթը կը լուսաւորէր, անցանք Սիւնիկայ Հայաբնակ գիւղը և համանուն կոյտը՝ հասանք Զոպոտիլ կոչուած գիւղը մեզմէ հեռի թողով անտառու լեռները և մայրաքաղաքը, և ըսկրսան ներկայանալ մեզ նոր անաւրաններ, ընդարձակ դաշտեր լեռներ և բլրակներ ոմանք այն ինչ մերկացած հասկէ և որայէ, եւ ոմանք զերծած յարօրէ և ի մշակութենէ, մի կողմը բարձր և լեռի բլրակներ և միւս կողմը Գեղամայ գեղածիծաղ ծովը երեւիլ. բնաւ չըտեսնուիր անտառի և փայտի նշմարանքներ, տեսանք ցամաքաբերդ Հայաբնակ գիւղը, որոյ յանդիման կերելի Սեւանայ կղզեակը Եկեղեցւոյ գմբեթը զանգակատունը միաբանաց իցերը, և քանի մի ծառատունկ. ծովակը հարաւէն հիւսիս կարի երկարած, իսկ յարեւելից յարեւմուտս ոչ այնչափ, ջուրը քաղցր, կը բերէ առատ ձկներ 12 տեսակ իւրաքանչիւր ամիս մի տեսակ, անուանի է իշխանաձուկն, կարմրախայտն և կողակն, ունի օժանդակ գետեր, որոց որոշեալ ժամանակին ձկանց բազմութիւնը երթեւեկելու ատեն, մեծ քանակութեամբ ձուկ կ'որսան, և այն շատ զիւրութեամբ:

Ծովուն արեւելեան կողմը կը նշմարուին հին ամրոցած եւ շինութեանց հետքեր: Աւելի ընդարձակ տեղեկութիւն տես, Սարգսիւր-իւն 5 Գաւառայն Հայաստանի: Գեղամայ ծովուն եղերքը արքունի ճանապարհին վերայ Մալականք շինած են մեծ գիւղ մի Էլնիկայ անուն, և կայան. բնակիչք իրենց թւոյն համեմատ ունին ընդարձակ դաշտեր, մշակուած իրենց սովորութեան համեմատ, բերդին առատութիւնը կալերուն շատութենէ կրնայ գուշակուիլ. գիւղին շինութիւնը տեղ տեղ բարեկարգ և քարուկիր, և կ'աշխատին աւելի ընդարձակել ծովեզերքը, դարահատին օժանդակութեամբ, կը դառմանեն ոչխարաց և անասնոց ջուկեր, որոց բազմութեան համեմատ պատրաստած են գոմեր և մակաղատեղի խաշանց, ասոնցմէ զատ կը սընուցանեն հաւերու բազմութիւն, և ծովեզերքը սաքերու և բադերու ահագին երամ անթուելի:

Ձկնորսութեան մենավաճառութիւնը մեծ շահ է Տէրութեան, որէնք է երեք տարի շարունակ որսալ, իսկ չորրորդին բոլորալին արգիւտած է, որպէս զի ձկունք վերստին բազմանան, ծովէն գետակ մի կը բաժնուի գիւղականաց և արտօրէից պիտոյիցը համար Մալականաց կանայք առ տնին գործը աւարտելէն զինի, կընկերանան իրենց արանց աշխատութեանը, զոր օրինակ հնձել, կրել, սայլալորել, կասուլ, սքա երկրագործութեան մէջ ընտանի կենդանիներէն աւելի գրաստ և ձի կը գործածեն, օրինակի համար 5 ձի միաշար իւրաքանչիւր կամնասայլով, մի փոքր մանուկ կարող է կառավարել երկաթաբաց արագութեան համեմատ: Այս գիւղը Հայ երիտասարդները սայլերով կարմրուկ կերաս (գըլլընգ) բերած էին եւ ցորենի հետ կը փոխէին

հաւասար չափով, այսինքն մի չափ ցորեն և մի չափ պտուղ:


Այս գիւղէն մեկնեցանք շարունակ նկատելով ընդարձակ դաշտերը, ոմանք նոր հիւսնած, ոմանք սպիտակացած և ՚ի հունձս հասած, ոմանք գութանով հերկած, հողը տեղ տեղ խիստ սեւ, գիւղականք առհասարակ կալի և հունձի զբաղած էին, և այս կողմերը Հայոց գիւղերը խիստ շատ են, թէեւ կը գտնուին երբեմն Մալականներ եւ Թիւրքեր, հիւսիսային կողմը կ'երեւին Արագած լեռան շղթաները, որոց կողերը կան գիւղեր ծառատունկեր այլովքն հանդերձ, իսկ գագաթը բոլորովին լեռի, դիւրամատչելի եւ արգասաւոր տեղերը մշակուած: Ճանապարհին վերայ է Հայոց Ախուս գիւղը, ուր կան նաեւ քանիմի Մալականաց տուններ, Հայոց տունները, ինչպէս յառաջագոյն ըսինք նախնի դրութեան համեմատ, իրեւ մի մի հողակոյտ ցած և անշուք, ունին մի Եկեղեցի, Հայք բոլոր ընտանեօք կալերը աւարտելու կ'աշխատէին, այս ճանապարհը շարունակ մինչեւ երեկոյ գնացինք, աստի երեւեցաւ Մասիս լեռան սպիտակափայլ գլուխը և ժամ 4ին հաղիւ գիւղի մի Պանդոկ հասանք, որոյ բնակիչք Հայաղգի, գիւղին ջուրը և պարտէզները խիստ առատ էր:

Աստի առաւօտուն կանուխ մեկնեցանք, ժամ 2 ին հասանք Քանաքեռ գիւղը բնակիչք Հայք, կաւակերտ տանց մի մասը հին աւերակաց վերայ շինուած է և մի մասը գիւղին ստորին կողմը. հնութեանց հետքերէն խոչարձան մի և կիսաւեր եկեղեցի մի մը նացած է. ջուրը և պարտէզները առատ, մրգեղանաց հետ ընտիր է ըսպիտակ թութն, կան ճիւղայիներ, յորոյ կըլնի աղնիւ գինի, մինչև ցատտ Կառավարութիւնը 5 տեղ ճանապարհ

հի սահմանեալ տուրք կառնու իւրաքանչիւր անցորդէ: Մինչդեռ արեգուկը հորիզոնէն կը բարձրանար և տաղնապիչ քերմութեամբ նեղութիւն կը սպառնար, հասանք Երեւան Հայոց հին քաղաքին արեւելեան բլրակը, ուստի կ'երեւի տափարակ գաշտի վերայ տարածուած ամբողջ քաղաքին տեսարանը խառն այգիներով և պարտէզներով, քաղաքին արեւելեան փողոցը թէ և ըստ նոր դրութեան լայն, բայց կարի անհարգ, հարաւային կողմն է հին բերդն, մասամբ իւրիք քանդուած, մաս մի զօրանոց Ռուսաց, կան այնպիսի մասնաւոր տեղիք՝ որ կառավարութեան պաշտօնէից կը ծառայեն, իսկ արեւմտեան գետին կողմը ամբողջ, արեւելեան թաղը ըստ նոր դրութեան շինուած է գեղեցիկ և կարգաւորեալ, իսկ մնացեալները հին դրութեամբ. կան քաղաքին մէջ ինքնաւատեղիք (Քիւլանսարայ) այլ ոչ կարգաւորեալ. նշանաւոր է այլադգեաց Զիլի մզկիթն, որոյ ամբողջ գմբէթն և աշտարակն (Ռնարէ) կանաչագոյն յախճապակեաց յօրինուած, բնակիչք Հայք, Պարսիկըք, և Ռուսք սակաւաթիւ. Հայք ունին վեց Եկեղեցի, և անապատն Անանիա Առաքելոյ, (այժմ Եկեղեցի ժողովրդական), իւրաքանչիւր Եկեղեցի ունի ծխական դպրոց, և մի եւս դիմական, ուր կ'աւանդուին ուսմունք Հայ և Ռուս լեզուաց ՚ի հաշիւ Տէրութեան. Առաջնորդ Եպիսկոպոսն իբր փոխանորդ Կաթողիկոսին նստի աստ, քաղաքին արեւմտեան կողմէն կանցնի Հրադգան գետը, որ Պարսիկներն լէնկէ կոչեն, յորոյ վերայ ձգուած է քաւուկիր կամուրջ, շինուած են կարգաւորադասներ, գետը զանազան ջրմուղներով և առուններով բաժնուած է, թէ քաղաքին այլ եւ այլ թաղերուն պէտքերը հոգալու, և թէ քաղաքէն

դուրս այգիները և պարտեզները ուռ-
գելու, և թէ քաղաքին ստորին կողմը
եղած գիւղերուն անդաստանները,
Այգիները և պարտեզները խիստ ա-
ռատ են և խնամով մշակուած, զա-
նազան տեսակ մրգեղէնները երկրացիք
առատութեամբ կը վայելեն, գովելի է
դինին: Այս քաղաքին վերայ Օսման-
ցիք և Պարսիկք շատ անգամ մեծա-
մեծ պատերազմներ ըրին իրարու ձեռ-
քէ խլելու պայմանաւ, երբեմն միաց
ընդ իշխանութեամբ Օսմանցւոց իւր
շրջապատ սահմաններով, առաջին ան-
գամ Սուլթան Սէլիմայ Առաջնոյ, և
յերկրորդումն յաւուրս Սուլթան Մու-
րատոյ չորրորդի կրկին անգամ. եւ
հուսի ուրեմն վերջին դաշնադրու-
թեան, Օսմանցիք այս քաղաքը իւր
սահմաններով թողուցին Պարսից, և
ինքեանք տիրեցին Պաղտատ քաղաքի
և նահանգի նորին:

(Շարունակելէ:)



Ն Ե Ր Ք Ի Ն Ծ Ո Վ

Ա Ն Ճ Ե Ր Ի Ո Յ Մ Է Ջ

Ալճերին՝ Ափրիկէի մէջ Պերպե-
րիստանի մէկ մասն է, որ Եգիպտոս-
սէն սկսեալ մինչեւ Ատլանտեան Ով-
կիանոսը կը տարածուի. նախնեաց ծա-
նօթ էր, ինչպէս Եգիպտոսը, և կը բը-
նակէին այս տեղ Մաւրիտանացիք և
Նիւմիդացիք: Այս երկիրը Կարկե-
դոնացւոց ժամանակ, որոց հայրենիքն
էր, շատ անուանի էր, յետոյ Հռովմե-
ացւոց իշխանութեան տակ իյնալով
հետզհետէ իւր նախկին փառքն ու

փառաւորութիւնը կորսնցուց: Սարա-
կինոսներն 697ին այս տեղէն հալածե-
ցին զՀռովմայեցիս: Գաղղիացիք 1830
ին Ալճերին առնելով՝ մուտ գտան
այս երկրին մէջ և այժմ Գաղղիական
գաղթականութիւն է Ալճերին, որ
Գաղղիացւոց տիրելէն ՚ի վեր յառաջա-
դիմելու և քաղաքակրթութեւն վերայ է:

Ատլաս լեռանց շղթայն Պէրպէրիս-
տանը երկու մասն կը բաժանէ արեւ-
մուտքէն դէպ արեւելք. հիւսիսային
կողմը Թէլ կ'ըսուի, ուր ցորենի վե-
րաբերեալ արմատաց մշակութիւն կը
լինի. հարաւային կողմնէ Սակարան կամ
Ջէ անապարը, որ նոյնպէս կ'անուանի
Պիլար-ի-լ-ճէրիս (երկիր արմաւենեաց):
Ալճերիի հարաւային կողմը՝ Պիւքրայէ
մինչև Թուքուրդ եղած լայնութեամբ
արեւելքէն դէպ արեւմուտք Շօլ մաս-
նաւոր անուամբ ընդարձակ երկիրներ
կան, որք Սահարայի մասերն են եւ
գրեթէ բոլորովին անապատային են:
Շօթերը ձմեռան՝ անձրեւներէն ծա-
հիճներ և լճեր կը ձեւանան. իսկ ա-
մարան մեծ մասամբ ջերմութեամբ կը
ցամաքին: Երկուր ժամանակէ ՚ի վեր
կարծիք կար որ այս երկիրները յաճ են
Միջերկրականի մակհաւասարութե-
նէն, և կենդադրէին, որ երբեմն հա-
ղորդակցութիւն ունեցած ըլլան Մի-
ջերկրականի հետ ձեւանալով իբրեւ
մասն Գապէսի ծոցին:

Այս ծոցի ափանց վերայ, որ այ-
սօր երաշտ և անբնակ է, երբեմն կա-
յին ծաղկեալ քաղաքներ. ամբողջ գա-
ւառը, որ այժմ լքուած է աւազնե-
րով եւ արեգակէն լափիլղուած, ա-
ռաջ ունէր ճարտարարուեստ և վա-
ճառաշահ ժողովուրդներ. և այն ա-
տեն ծովը ցամաքին մէջ կ'երկարածը-
գէր դէպ արեւմտեան կողմը հարիւր
տասն եւ հինգ մղնի չափ: Սփկոյ
ծոց Թրիթոնի կ'ըսուէր, որ հիմա ևս

աշխարհագիր տախտակներու վերայ ճահիճի ձևով նկարուած է : Ասոր յիշատակը հիները կը պահպանէին և առաջ ծովուն հետ նեղուցով մի կապուած էր :

Ծովու ալքներէն, կամ հողմերէն դիզուած աւաղները լեցնելով այս նեղանցքը, ծոցը լիճ եղած է . և հետըզհետէ շոգիացմամբ կորուսանելով իւր ջուրը ցամաքած է, թողլով անհատար և ծովային աղով յագեալ երկիր մի, որոյ մեծ մասը մինչեւ հիմա աղի ճահիճներու վիճակն ունի :

Եթէ 'ի մասին Եօթերու կազմութեան այս տեսութիւնը ճշմարիտ է, կարելի չէր արդեօք հաստատել ծովուն հետ անոնց նախկին հաղորդակցութիւնը, ջուրը բերել Թունուզի և Ալճերիի հարաւային կողմը, բանալ այսպէս վաճառականական ճանապարհ մի մինչև Սահարայի ծոցը, հաստատուն կերպով չափաւորել բաժնախօսական աստիճանները ջրոյ շոգիով, որոյ օգնեւս պիտի փոփոխի այս նոր ծովուն վերայէն անցնելով : Այս կարի օգտաւէտ խնդիրն է, զոր քանի տարիներէ 'ի վեր կ'առաջագրէ Պօղոս — Մարէ գիտնականը :

Այս խնդրոյն լուծման համար առեւնէն առաջ հարկ էր ստուգել թէ՛ Եօթերու մակհաւասարութիւնը իրօք Միջերկրականի մակհաւասարութենէն ցած է . գիտնալ Գապէսի ծոցին և ներքին ծովու միջեւը ջրանցք մի բանալու կարելիութիւնը, ուրկէ այս ծովը պիտի լեցուի և նաւերու երթեւեկութիւնը պիտի ըլլայ . նկատողութեան սուներու էր այն օգուտները, զորս նոր աւաղանը պիտի մատակարարէ, թէ՛ վաճառականութեան նկատմամբ, թէ՛ կլիմայի բարեփոխութեամբ թէ՛ պտղաբերութեամբ Ալճերիի շատ մասանց, որք այսօր երաշտութեան

պատճառաւ անբեր մնացած են :

Գաղղիացի պաշտօնակալ մի Պ. Բուտէր այս խնդրոյն առաջին երկու մասերը լուծելու աշխատեցաւ . իսկ վերջին մասին վերայ ընագէտները և Մէտրէաբանները աշխատեցան : Պ. Բուտէր Պ. Տը-Լէսէբսի գործնական հոյակապ հեղինակութենէն և Գաղղիոյ Ազգ. Ժողովոյ, որ այս աշխատութեանց համար 100000 ֆրանքի ծախս մի սահմանեց, պաշտպանութենէն խրախուսուած՝ Եօթերու գաւառին հարթաչափական եւ եռանկիւնաչափական գործողութեանց ձեռնարկելով՝ յաջող եղրակացութեան մի հասաւ : Հաստատեց, որ այս ընդարձակ երկիրը միջին հաշուով 20 մեդր ցած է Միջերկրականէն : Բուտէրի աշխատութիւնքը գիտութեանց Ակադէմիայի Մայիս 21ի նիստին մէջ գնահատուեցան տեղեկագրի մի ընթերցմամբ, զոր այլ և այլ ձեռնասհաս անձինքներէ կազմեալ մասնաժողով մի սլատրաստած էր :

Տեղեկաբերը երկար չէր խօսէր այն դժուարութեանց վերայ, որք յառաջ պիտի գային Միջերկրականի և Եօթի միջեւ հաղորդակցութեան ջրանցք մի բանալու ձեռնարկէն . իսկ անկէ յառաջ գալիք օգուտներու մասին, կ'ըսէ, որ անհամեմատելի են Սուէզի պարանոցի պեղումէն յառաջ եկած օգուտներուն հետ 'ի մասին վաճառականութեան : Կեդրոնական Ափրիկէի արտադրութիւնքը անապատէն ուղտերով փոխադրուելով բաւական չեն ըլլար շատ մը վաճառականական նաւեր բեռնաւորելու . բայց եթէ այս արտադրութեանց փոխադրութեան ծախսերը նուազին, յայտնի է, որ գինները պիտի իջնեն և սպառումը պիտի աւելնայ : Անուրանալի է յառաջ գալիք օգուտը . բայց ոչ մի կերպով

կտրելի չէ ճշգիր գնահատուել այս հա-
ղորդակցութեան ճանապարհներուն
վաճառականութեան նկատմամբ ինչ
աստիճանի նպատուելը :

Ուրիշ օգուտներու վերայ խօսելով
կը յաւելու Տեղեկաբերը , թէ ներք-
նածուլը կլիմայի զգալի փոփոխութիւն-
ներ յառաջ պիտի բերէ եւ երկրի
բարեբերութեան շատ պիտի օգնէ :
Շօթի ծովը 13000 քառ . հազարամեդ-
րէն աւելի ընդարձակութիւն պիտի
ունենայ , և աղի լճերու շոգիացման
վերայ եղած հաշուոյ համեմատ քսան
և չորս ժամուան մէջ մթնոլորտին պի-
տի տայ 40 միլիոն խորանարդ մեդր շո-
գիացեալ ջուր : Զրոյ այս շոգին տա-
րածուելով օդին մէջ պիտի ժողովէ
(Թինտալի գեղեցիկ փորձերուն համե-
մատ) երկրէն կամ արեգակէն բուրոյ
ջերմութիւնը , պիտի նուազեցնէ ցե-
րեկը՝ երկրին տապը և գիշերը՝ ցրտու-
թիւնը . որով տեղի չը պիտի ունենայ
Շօթի գաւառին մէջ բարեխառնու-
թեան այն մեծ տարբերութիւնը , զոր
Պ . Բուտէր նկատողութեան առնելով՝
հաստատած է , որ ջերմաչափը՝ ցերեկը
25 աստիճան կը բարձրանայ , իսկ գի-
շերը կ'իջնէ զրոյէն մինչեւ 8 աստիճան
վար : Բարեխառնութեան այս չափա-
զանց փոփոխականութիւնը շատ կը
վնասէ անկոյց և այս է Շօթի բնական
բարեբեր գաւառին անբերութեան
պատճառը :

Ներքնածուլը պիտի ունենայ նաև
այս օգուտը . ջրոյ շոգին բարձրանա-
լով գէղ Ծրէս և Ալճերիի միւս լեռ-
ները՝ ցրտութեամբ պիտի խտանայ .
մերթ պիտի անձրեւէ և մերթ պիտի
ձիւնէ , որով ջրոյ ընթացքներ պիտի
կազմուին և գետոց անկողինները (lit)
որ այժմ տարւոյն մեծ մասը ցամաք
են , պիտի լեցուին և այսպէս գեղե-
ցիկ գետեր և մշտահոս աղբիւրներ

պիտի ձեւանան : Այս պարագայնե-
րէն բնական է նախատեսել , որ հա-
րաւային Ալճերիի երկրագործական
գաւառներուն մէջ մեծ փոփոխու-
թիւններ պիտի ըլլան և կէս անապա-
տային երկիրները բարեբեր գաւառնե-
րու պիտի փոխուին :

Պ . Բուտէրի խորին մտադրու-
թեամբ ուսումնասիրած այս յատա-
կագծի իրագործութիւնը մեծամեծ
գոուարութիւններ ունի , Շօթի մէջ
ջուր բերելու համար բնականաբար
հարկ պիտի ըլլայ Միջերկրականէն
բարձր երկիրներէ անցնիլ , բլուրներ
կտրել և վերջապէս բաւական ընդար-
ձակ ջրանցք մի պեղել . թէև այս մտ-
սին Տը-Լէսէբսի կարծիքը տարբեր է ,
և կ'ըսէ , որ մեծ գոուարութիւն չը
կայ այս ձեռնարկին մէջ և նոյն իսկ
ըլլալիք ծախսերն շատ թեթեւ պիտի
ըլլան :

Ահաւասիկ ասոնք են Ալճերիի մէջ
բացուելիք ներքնածուլու խնդիրը քնն-
նող տեղեկագրի եզրակացութիւնները :

Համառօտ ըսելով Շօթի մէջ բե-
րուելիք ջուրը , որ երբեմն կար , յա-
ռաջ պիտի բերէ խիստ օգտակար աղ-
գեցութիւն մի այն ընդարձակ երկիր-
ներուն վերայ , որք գրեթէ այսօր բու-
րրովին անապատներ են , և պատճառ
պիտի ըլլայ հետզհետեւ եւրոպական
քաղաքակրթութեան ծաւալման այն
երկիրներուն մէջ , որք բոլորովին բար-
բարոսութեան մէջ են :



ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ամսոյս Յին՝ Գրիստոսի Տեառն մե-
րոյ Պայծառակերպութեան հանդիսա-
ւոր տօնի օրը, Ամեն, Ս. Պատրիարք
Հայրն Ս. Պատարագ մատուցանելով
Վարդապետութեան բարձր աստի-

ճան տուաւ Ս. Աթոռոյս Միաբա-
նութենէն հինգ Սարկաւագաց, որք
են հետեւեալները, իրենց նոր ստա-
ցած Քահանայական օժման անուանե-
լով հանդերձ.

Գաբրիէլ Սարկաւագ Խաղայենց Խարբերդցի	Սահակ Վարդապետ
Մելքոն	Յակովբեան Թէքիրտաղցի Վահան
Մաքսուտ	Մաքսուտեան Դամասկացի Ղեւոնդ
Կարապետ	Սաքայեան Սեւերեկցի Գարեգին
Սիմօն	Սանասարեան Վանեցի Յակովբ

Սոցա առաջին երեքը Ժառանգա-
ւորաց Վարժարանէն յառաջ եկած և
նոյն հաստատութեան մէջ Ուսուց-
չութեան և Տեսչութեան պաշտօնիւ,
իսկ վերջի երկուքն եկեղեցական պաշ-
տօն վարելով. իւրեանց հաւատարիմ
աշխատութեամբ արժանաւոր գտնը-
ւեցան սոյն աստիճանի։ Ս. Աթոռոյ
Կառավարութիւնը կոչելով յիշեալնե-
րն ՚ի կուսակրօն Քահանայութիւն,
յոյս մեծ ունի որ նոքա իւրեանց կոչ-
ման համեմատ կեանքով մը, իւր պար-
ծանաց կնիք և հանուր Ազգի փառաց
ու օգտին նախանձախնդիր հովիւներ
սլիտի հանդիսանան. որոյ վրան բարե-
մաղթու եմք առ Հօտապետն Գրիս-
տոս, առնել զսոսա մշակս առանց ա-
մօթոյ, առաջնորդելով նոցա իւր ա-
մենասուրբ Հոգւովն ընթանալ և հո-
վուել ըստ անմղար շուղաց Հայաս-
տանեայց Առաքելական Ս. Եկեղեցոյ։

—Քաղաքիս շրջակայքը բնակող և
Տէրութենէ ապստամբ երկու Թախ-
ա և Թարապիւն կոչուած արապ ցեղերու
Շէխեր, որք նախորդ կառավարչաց նոյն
կողմերը այցելութեան ատեն մեծագին
ընծաներու տակ ծածկած էին ցարդ
իրենց ապստամբութիւնը. այս օրերս
ձերբակալուած են։ Տեղւոյս Վսեմ.
Կառավարիչը, երկու ամսէ ՚ի վեր Կա-
ռավարական կարգադրութեանց պատ-

ճառաւ Ղաղէ գտնուելով, յիշեալ շե-
խերէն հինգական հօգի, իւր աչա-
լուրջ և արդարասէր ջանիւքն ձեռք
բերելով քաղաքս բերած է, ուր կը
սպասեն Բ. Դրան հրամանին։ Կառա-
վարիչն ամսոյս 22ին իւր այցելութե-
նէն դառնալով տեղս ժամանեց։

—Բնթղէ հէմ բնակող արապ մը, որ
երկու տարի առաջ Յոյն կին մը յօշ-
յօշ պատառած և սպանած ըլլալով
ցարդ աներեւոյթ եղած էր, այս օրե-
րրս Ոստիկանութեան հարկւրապետի
հետադատութեամբ ձանցուցելով Ղա-
ղէի մէջ, քաղաքս բերուած եւ բան-
տարկուած է։

—Ամսական Իսնէ հաւաքելու հը-
րամանը Բ. Դռնէն Տեղւոյս Կառա-
վարութեան եւս հաղորդուելով, ըս-
կըսաւ ժողովուիլ։ Մահմետական և
ոչ — Մահմետական հպատակք բա-
րեխնամ Տէրութեան օգնելու գոհա-
ցուցիչ յոյս կը տան։ — Քաղաքիս խա-
ղաղութիւնը Վսեմ. Կառավարչի ա-
ջալուրջ հսկողութեամբ անխղով է։

—Անցեալ տարուան անձրեւներու
նուազութեան և զօրածողովի առթիւ
հունձքը նուազ ըլլալով ցորենը սուղ
կը գտնուէր. սակայն այս օրերս սկը-
սած է դրսէն թէ՛ ծովէն և թէ՛ ցա-
մաքէն առատութեամբ գալ։

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Կարեւորութիւն ուսման Ս. Գրոց. (Շարունակելի) .	145-149
Խաչերութիւն	149-152
Մարդկային կեանք. (Շարունակելի)	152-157
Բնագիտութեան և Տիեզերագրութեան վրայ ստորդ խօսակցութիւն. (Շարունակելի) . . .	157-162
Ուղեւորութիւն Ն. Ս. Էջմիածին. (Շարունակելի) .	162-165
Ներքին ծով Ալճերիայ մէջ	165-167
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ	-168

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սիօնը ամէն ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մէկուկէս ութածաղ թղթով :
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէճիաիկ, Ճանապարհի ծախքով միասին, կանխիկ վճարել :
- Գ. Զատ տետրակ առնել աւելից սկսած է ամէն մէկ տետրին չորս գա. հեկան վճարէ :